



«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

ՍՅՈՒՆԻԻ ՏՐԱՍՍԵՐԶԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Syunik REGIONAL BRANCH

of NGO “The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Center”

# Մոնիտորինգի զեկույց

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների  
երեխայի զարգացնող միջավայրի ապահովում»

(ՀՀ Գորիս քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններ)

2014 թ.

## Ներածություն

Հայաստանի Հանրապետության «Նախադպրոցական կրթության մասին» օրենքը նախադպրոցական կրթությունը սահմանում է, որպես մի ամբողջական գործընթաց և Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մաս, որի նպատակներն են.

ա) երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը,

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

Հայտնի է, որ նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը մեծապես կախված է երեխայի շրջապատող միջավայրից: Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ մանկապարտեզներ (0-6 տարեկանների համար): Այսպիսով, ընտանիքից բացի նախադպրոցականի անձի զարգացման մյուս կարևոր միջավայրն է նախակրթարանը, որտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որում կխթանվեն և կզարգանան նախադպրոցականի դեռևս նոր ձեռք բերած անձնային ինքնուրույնության ու վարքային որակները, որոնք էլ պիտի հիմք հանդիսանան երեխայի «Ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը:

Չնայած ՀՀ կառավարությունը առաջնային է համարում երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը և բազմաթիվ օրենսդրական լուծումներ է առաջարկում կյանքի կոչելու նախադպրոցական ուսումնական հաստատությունների զարգացումը ( ընդունվել են նախադպրոցական կրթությունը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը. ՀՀ օրենքը կրթության մասին (1999), Նախադպրոցական կրթության զարգացման պետական ծրագիր (2000), ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին (2005), Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագիրը, մեթոդաբանական գրականություն, ուղեցույցներ և այլն), սակայն, եթե դպրոցական կրթության մեջ արվում են որոշակի փոփոխություններ, ապա նախադպրոցական կրթության մեջ, հատկապես մարզերում, փոփոխությունները դանդաղ են ընթանում և այդ ուղղությամբ առավելապես աշխատանքները տարվել են միայն հիմնահարցերի արձանագրման վրա: Հիմնական պատճառներն հետևյալն են.

- ✓ 1996թ. տեղական ինքնակառավարման օրենքի ընդունման արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար պատասխանատու դարձավ համայնքը և այդ ժամանակից ի վեր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունները սկսեցին ֆինանսավորվել տեղական բյուջեից և ծնողների կողմից վճարվող գումարներից: Բյուջեի սղության պատճառով տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չեն կարողանում ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիարժեք գործունեությունը, իսկ շատ գյուղական համայնքներում մանկապարտեզների շինությունները դեռևս գոյություն ունեն, սակայն դրանց վերաբացումը լուրջ ներդրումներ է պահանջում, ինչն անհասանելի է հատկապես փոքր գյուղական համայնքների համար,
- ✓ մյուս կողմից, ինչպես հայտնի է, վերջին տարիների ընթացքում, փոքր քաղաքների և գյուղական համայնքների բնակաչության թիվը զգալիորեն նվազել է՝ կապված արտագաղթի հետ, որը հանգեցրել է հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների

թվի կտրուկ նվազմանը: Այն համայնքներում, որտեղ երեխաների թիվը քիչ է, վերոնշյալ ծախսերը ֆինանսապես անհասանելի են և չեն էլ կարող ապահովվել ծնողների կողմից վճարվող գումարների հաշվին

- ✓ միննույն ժամանակ կան խնդիրներ, որոնք հիմնականում անկայուն սոցիալ-տնտեսական իրավիճակի հետևանք են: Գործազրկությունն ու ընտանիքների աղքատությունը խոչնդոտ են հանդիսանում երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովմանը նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջոցով:

Խնդիրը հատկապես բարդ է փոքր գյուղական համայնքներում, որտեղ և համայնքային նվազ բյուջեն և նախադպրոցական տարիքի երեխաների թիվը չի կարող ապահովել մանկապարտեզների լիարժեք գործունեությունը:

Կարևորելով նախադպրոցական կրթության ոլորտի հիմնախնդիրները և համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը 2008 թվականի մարտի 13-ի նիստի N 10 արձանագրային որոշմամբ հաստատել է „Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թավականների ռազմավարական և փորձնական ծրագրերը“: Ռազմավարական ծրագրի շրջանակներում առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ հինգից վեց տարեկան երեխաների տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը: Վերջինս առանձնակի կարևորվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության անցման հետ՝ կապված 6-6.5 տարեկաններին տարրական դպրոցին նախապատրաստվելուն: Ծրագրային ժամանակահատվածի վերջում (2016թ.) նախատեսվում է 5-6 տարեկանների համար նախադպրոցական կրթությունը դարձնել համընդհանուր:

Հաշվի առնելով նախադպրոցական կրթության կարևորությունը և նշանակությունը երեխայի համակողմանի զարգացման, դաստիարակության, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցերում, ինչպես նաև է նախադպրոցական ավագ տարիքային խմբի տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը „Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների հայկական կենտրոն” հասարակական կազմակերպության Սյունիքի մասնաճյուղը իրականացրել է Գորիս քաղաքի 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններում մոնիտորինգ:

### ***Մոնիտորինգի նպատակը***

Գորիս քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերի երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման պայմանների մոնիտորինգի իրականացում:

### ***Մոնիտորինգի իրականացման համար առաջադրված խնդիրները***

Ուսումնասիրել՝

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարածքների համապատասխանությունը երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներին:
2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանությունը երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներին:
3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ավագ խմբի երեխայի խմբասենյակի տարածքում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին:

## ***Մոնիտորինգի իրականացման մեթոդները***

Մոնիտորինգի իրականացման ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

### **1.Օրենսդրության վերլուծություն**

Ուսումնասիրվել են միջազգային և ներպետական օրենսդրությունը

#### ***Միջազգային պայմանագրեր***

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,
- Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը,
- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա:

#### ***Ներպետական օրենսդրություն***

- ՀՀ Սահմանադրություն,
- ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»,
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք,
- ՀՀ օրենքը «Կրթության մասին»,
- ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին»,
- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»,
- ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»

#### ***ՀՀ կառավարության որոշումներ***

- «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության մասին,
- «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» (4 նոյեմբերի 2010 թվականի N 1427-Ն),
- «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն (26 դեկտեմբերի 2002 թվականի N 54),
- ՀՀ Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ-ի ազգային ծրագիր (ՀՀ կառավարության 2003թվականի դեկտեմբերի 29- թիվ 1745-Ն որոշում),
- Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30 մարտի 2011թ N 257-Ն հրամանի հավելված),
- «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը» (ՀՀ Կրթության և գիտության նախարարի 26 ապրիլի 2011թ N 416-Ն հրաման),
- ՀՀ Կրթության պետական տեսչության կողմից ՀՀ նախադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունում տնօրենին, մեթոդիստին, ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների ( ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N 598 - Ն որոշման Հավելված N 3),
- ՀՀ Կրթության և գիտության նախարարության համակարգի մանկապարտեզների աշխատողների ներքին աշխատակարգի կանոններ (Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից),
- Կրթական հաստատությունների բուժօգնության կազմակերպումը ( ՀՀ Առողջապահության նախարարի 21.12.2010թ. N-2076 հրաման),
- ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակ (ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N29-Ն հրամանի հավելված1),
- ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության և հաստատություն հաճախող երեխայի ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) միջև կնքվող օրինակելի պայմանագրի վերաբերյալ մեթոդական ցուցումներ (ՀՀ ԿԳ Նախարարի 23.03. 2007թ. N 180 - Ա/Ք հրամանի հավելված 1),

- ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի խտությունը և նորմատիվները (ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N29-Ն հրամանի հավելված 2),
- ՀՀ – ում Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ-ի ռազմավարական ծրագիրը (ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման Հավելված N 1),
- «Նախադպրոցական կազմակերպությունների սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին ( ՀՀ առողջապահության նախարարի թիվ 857 հրամանը):

***Նախադպրոցական ուսումնական հաստատությունների փաստաթղթային վերլուծություն***

- Նախադպրոցական հաստատության վիճակագրական հաշվետվություն,
- Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի արձանագրություններ,
- Նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության մասին տեղեկանքներն ու ակտերը:

**2. Դիտարկումներ**

Դիտարկումները իրականացվել են Գորիս քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Դիտարկումներն իրականացվել են 3 դիտարկման թերթիկների միջոցով.

1. Նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքի
2. Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքային պայմանների
3. Նախադպրոցական ուսումնական հաստատության ավագ խմբի երեխայի խմբասենյակի:

Դիտարկումների ընթացքում ուսումնասիրվել են նախադպրոցական ուսումնական հաստատության երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով տարածքի, շենքային և ավագ խմբի խմբասենյակի պայմանների համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին:

Ստորև ներկայացված են դիտարկված նախադպրոցական ուսումնական հաստատությունները.

- Գորիսի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն
- Գորիսի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն
- Գորիսի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն
- Գորիսի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն
- Գորիսի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն

**3. Հարցումներ**

Հարցումները իրականացվել են հարցաթերթիկների լրացման և հարցազրույցների միջոցով: Հարցաթերթիկների միջոցով հարցումներ են կատարվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների 5 տնօրենի, 5 մեթոդիստի, 15 դաստիարակի, 250 ծնողի շրջանում: Հարցազրույցների միջոցով հարցումներ են կատարվել 5 տնօրենի, 10 դաստիարակի օգնականի, 5 բուժքրոջ, 25 ծնողի հետ : Ընդհանուր առմամբ ողջ ուսումնասիրության ընթացքում հարցումներ են անցկացվել 320 անձանց շրջանում:

**Տեղեկատվության աղբյուրները**

- ՏԻՄ ներկայացուցիչներ
- Համայնքի բնակիչներ
- Նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների ծնողներ
- Նախադպրոցական հաստատության տնօրեն, մեթոդիստ, դաստիարակներ, աշխատակիցներ
- Գործիսի քաղաքապետարանի պաշտոնական կայք
- Նախադպրոցական ուսումնական հաստատության վարչամանկավարժական փաստաթղթեր

## Մոնիթորնգի արդյունքները

### 1. Օրենսդրության վերլուծություն

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի Նախադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության խնդիրներն են՝

ա) նախադպրոցական կրթության զարգացմանն աջակցելը.

բ) պետական կրթական չափորոշիչների շրջանակներում նախադպրոցական կրթության ծրագրերում ընդգրկվածության ավելացումը.

գ) երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը նպաստելը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են նախադպրոցական կրթության նպատակները և խնդիրները որոնք հետևյալն են.

**Նախադպրոցական կրթության նպատակներն են՝**

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

**Նախադպրոցական կրթության խնդիրներն են՝**

ա) նախադպրոցական տարիքի երեխաների մեջ մայրենի լեզվով հաղորդակցվելու և հաշվելու տարրական կարողությունների զարգացումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխայի խնամքը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը.

գ) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, աշխատանքային տարրական հմտությունների և կարողությունների ձևավորումը.

դ) հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումն ու արմատավորումը.

ե) երեխայի անհատականության ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը.

զ) նախադպրոցական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրթությունը շարունակելու պատրաստվածության ապահովումը.

է) ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը:

Ըստ նույն օրենքի նախադպրոցական կրթությունը համարվում է Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մաս և կրթության մի ամբողջական գործընթաց, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երե-

խայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան, նախադպրոցական տարիքի երեխայի մեջ վարվելակերպի տարրական նորմերի ձևավորմանը (տես՝ ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին», *հոդված 7.*): Մինևույն ժամանակ նախադպրոցական կրթության համակարգը իր մեջ ներառում է՝

ա) նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը.

բ) նախադպրոցական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունները (կրթահամալիրները), որոնք իրականացնում են նախադպրոցական կրթական ծրագրեր.

գ) նախադպրոցական կրթության կառավարման մարմինները, դրանց ենթակայության տակ գտնվող համապատասխան կազմակերպությունները.

դ) ընտանիքը (տես՝ ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին», *հոդված 8.*):

Նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանվում է լիազորված մարմնի (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն) կողմից հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով և իրականացվում է չափորոշիցին համապատասխան կրթական ծրագրերով: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը իր մեջ ներառում է նախադպրոցական տարիքի երեխայի զարգացածության, կրթադաստիարակչական մակարդակը սահմանող համապատասխան նորմեր և դրույթներ: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի ապահովումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի ծրագրամեթոդական ապահովումը իրականացնում է նույնպես կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:

Չափորոշիչն համապատասխան՝ ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի, զարգացման ու կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ ու շենքային և այլ պայմաններ, իրականացվում է պետական, համայնքային, ոչ պետական ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը, դիտարկվում, որոշվում է երեխայի ֆիզիկական, մտավոր, հուզական (եմոցիոնալ) զարգացման ընթացքն ու մակարդակը, սահմանվում է երեխաների մտավոր և ֆիզիկական բեռնվածության համամասնությունը և այլն:

Չափորոշիչը իր մեջ ներառում է կրթադաստիարակչական հիմնական բնագավառները, ուղղությունները և բովանդակության բաղադրիչները, երեխաներին ներկայացվող ընդհանուր կրթական պահանջները, կրթական հիմնական բնագավառները, ուղղությունները և բովանդակության բաղադրիչները, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը, նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի զարգացնող միջավայրի չափանիշները և նրան ներկայացվող պահանջները (տես՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30 մարտի 2011թ N 257-Ն հրամանի հավելված):

Նախադպրոցական կրթության բնագավառի կառավարումն իրականացնում են՝

ա) կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

բ) տեղական ինքնակառավարման մարմինները (տես՝ ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին», *հոդված 15.*):

Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ տեղական ինքնակառավարման մարմինները, նրա կողմից նշանակված

գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը:

Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

### ***Դիտարկումների վերլուծություն***

Գործի քաղաքաի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարածքի դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ չորս նախադպրոցական ուսումնական հաստատությունները գտնվում են տրանսպորտային մայրուղուց բավականաչափ հեռավորության վրա, իսկ մեկը՝ ոչ: Բոլոր հաստատություններն ունեն ինքնուրույն տարածք և մեկուսացված են շրջապատից: Սակայն հաստատությունների մոտակա մայրուղիների վրա բացակայում են „հետիոտնի անցում” կամ „երեխաներ” նախազգուշացնող նշանները: Մոնիտորինգի խմբին ակնառու էր քաղաքային աղբամաններ, որոնք տեղակայված են հաստատության տարածքից ոչ բավարար հեռավորության վրա:

Բոլոր հաստատությունների տարածքում առկա են սպորտային, խաղային , ուսումնափորձնական, հանգստյան, տնտեսական գոտիներ: Դիտարկումները ցույց տվեցին, որ գոտիները բավարարում են սանիտարահիգիենիկ պահպանության նորմերին և անվտանգության նախատեսված պայմաններին:



Թիվ 2 մանկապարտեզի բակը



Թիվ 3 մանկապարտեզի տարածքը



Թիվ 5 մանկապարտեզի տարածքը

Ոչ բոլոր հաստատությունների տարածքում են առկա երեխաների ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներ, մարզադահլիճ, մարզական գույք, ղեկորատիվ կամ իսկական լողավազան:

Ոչ մի հաստատություն չունի առանձին տարածք կենդանի բնության համար, տարածքում չեն խնամվում և պահվում կենդանիներ, թռչուններ, ձկներ, կրիա:

Բոլոր հաստատության տարածքում ստեղծված են պայմաններ բույսերի խնամքի և աճեցման համար, սակայն ոչ բոլորն են խնամված:

Մոնիտորինգի խմբի անդամների կողմից նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարածքի ընդհանուր սանիտարական վիճակը գնահատվել է բավարար:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրի շենքային պայմանների դիտարկումների արդյունքում պարզվեց, որ բոլոր հաստատություններում առկա են հանդերձարաններ, որոնք նորացված են, բավարարում են սաների թվին և տեղակայված են խմբասենյակների նախամուտքում:

Գրեթե բոլոր հաստատությունում առանձնացված են խմբասենյակները, ննջասենյակները, բժշկական սպասարկման սենյակը , խաղերի համար նախատեսված տարածքները:



Ոչ բոլոր հաստատություններում են առանձնացված ուսումնամարզական, մշակույթի և զանգվածային միջոցառումների համար սենյակները:



հանդերձարան թիվ 5 մանկապարտեզում



ննջասենյակ թիվ 7 մանկապարտեզում



խաղասենյակ թիվ 2 մանկապարտեզում

Հաստատությունների տարածքում ականառու են գեղագիտական ձևավորումներ, գունեղ նկարներով, ծաղիկներով, բույսեր՝ ուղղված երեխաների գեղարվեստական զարգացմանը, կան օժանդակ հարմարություններ թատերական գործունեության կազմակերպման համար, առկա է անկյուն պետական խորհրդանիշների համար, ազգային, ժողովրդական կենցաղի առարկաների նմուշներ:



Միջանցքի ձևավորում (թիվ 1 մանկ)



Միջանցքի ձևավորում (թիվ 7 մանկ)



Միջանցքի ձևավորում (թիվ 2 մանկ)

Հաստատություններում բացակայում են հատուկ տարածքներ երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքների համար, առանձին տարածքներ օտար լեզուների ուսուցման համար, մանկական գրադարան: Ֆիզիկական զարգացման համար անհրաժեշտ սարքավորումները, մարզական գույքը չեն համապատասխանում նախատեսված չափորոշիչներին:

Մոնիտորինգի խմբի անդամների կողմից նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների ընդհանուր սանիտարական վիճակը գնահատվել է բավարար:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրի ավագ խմբի երեխայի խմբասենյակի դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ խմբասենյակի կազմում ներառված են խաղային, ուսուցման, հանգստի գոտիներ, որոնք բավարարում են երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներին :



աշխատանքային գոտիներ (թիվ 2 մանկ)



աշխատանքային գոտիներ (թիվ 7 մանկ)



աշխատանքային գոտիներ (թիվ 3 մանկ)


Խմբասենյակների դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ որոշ հաստատություններում սաների թիվը գերազանցում է սահմանված նորմերին, դասասենյակների երկարությունը և լայնությունը չեն համապատասխանում նախատեսված չափորոշիչներին: Քիչ սաներ ունեցող հաստատությունները, ֆինանսավորման սղության

պատճառով, հնարավորություն չունեն թարմացնելու իրենց կահույքը, մահճակալները, մարզագույքը, խաղալիքները, տեխնիկան և իրականացնելու մասնակի վերանորոգումներ:

Դիտարկման խմբի անդամների կողմից խմբասենյակի ջերմաստիճանը գնահատվել է բավարար կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման և իրականացման համար, խմբասենյակի պատերի և հատակի վիճակը միջին մակարդակի, իսկ սանիտարական վիճակը՝ բավարար:

Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ խմբասենյակներում առկա են անհրաժեշտ սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ, դիտողական, նկարագարող նյութեր, տարբեր սյուժետայի խաղային հավաքածուներ, լեզուներ և խաղալիքներ երեխաների համակողմանի զարգացման համար:

Խմբասենյակում առկա են անհրաժեշտ քանակով ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար: Խմբասենյակի տարածքում ակնառու են տարածքի գեղագիտական ձևավորումները, կանաչապատման անկյունները, թատերական բեմականացումների համար ստրիբուտները, գրականությունը, ուղղված երեխաների գեղարվեստական զարգացմանը:



աշխատանքային գոտիներ (թիվ 7 մանկ)



աշխատանքային գոտիներ (թիվ 5 մանկ)



աշխատանքային գոտիներ (թիվ 2 մանկ)

Երեխաների տարածական և ժամանակային պատկերացումների զարգացման համար բոլոր խմբասենյակներում առկա են մանր և խոշոր կառուցողական նյութեր, տարբեր տիպի կոնստրուկտորներ:



Մշակույթի սենյակ (թիվ 7 մանկ)



բեմականացման պարագաներ (թիվ 2 մանկ)



ուսուցման գոտի (թիվ 3 մանկ)

Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ խմբասենյակներում չկան համակարգիչներ: Գրեթե բոլոր խմբասենյակներում գոյություն ունեն հեռուստացույցներ, նվազարկիչներ: Խմբասենյակում առկա են դիդակտիկ նյութեր, որոնք ծանոթացնում են երթևեկության կանոններին:

Դիտարկումների ընդհանուր վերլուծությունից մոնիտորինգի խումբը պարզեց, որ բոլոր Նախադպրոցական ուսումնական հաստատությունում տարածքները, շենքային պայմանները, խմբասենյակները համապատասխանում են նախադպրոցական կազմակերպությունների սանիտարական նորմերին և կանոններին հաստատված ՀՀ Առողջապահության նախարարի կողմից 20.12.2002 թ. N 857 հրամանով:

### 3. Հարցումների վերլուծություն

#### 3.1. Հարցումներ տնօրենների հետ



**Գործիս թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Սախա Արունց**

Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքը տիպային չէ: Այն հարմարեցված է և ունի բազմաթիվ թերություններ նախադպրոցական կրթության գործընթացի կազմակերպման նպատակով: Հաստատության մանկավարժական անձնակազմը հմուտ է և եռանդուն: Այդ իսկ պատճառով երեխաների ուսուցման ու դաստիարակության գործը գտնվում է բարձր մակարդակի վրա: Դրա մասին են վկայում մեր շրջանավարտների հաջողությունները և բարձր առաջադիմությունը հետագա ուսումնառության ընթացքում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերի երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման պայմանների մոնիտորինգի ընթացքում հաստատությունների բոլոր տնօրեններն աջակցել են մոնիտորինգի աշխատանքների իրականացմանը իրենց հաստատություններում: Նրանք, իրենց հերթին, պատասխանել են մեր հարցումներին: Բոլոր տնօրենների հետ հարցումները կատարվել են հարցաթերթիկների լրացման և բանավոր հարցազրույցների միջոցով:

Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ ոչ բոլոր հաստատությունների սովորող սաների թիվն է համապատասխանում նախադպրոցական ուսումնական հաստատությունների նախագծով սահմանված թվաքանակին: Կան խմբեր, որտեղ սաների թիվը գերազանցում է սահմանված չափորոշիչներից: Տնօրենները նշեցին նաև, որ նախորդ տարիների համեմատ սաների թիվն ավելացել է :



**Գործիս թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Ժամենա Խաչատրյան**

Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունը ամենախոշորն է Գորիս քաղաքում: Հաստատությունն ունի գույքի և սարքավորումների նորացման խնդիր: Կոլեկտիվի ուժերով իրականացրել ենք մի շարք ծրագրեր խմբասենյակների, սանհանգույցների վերանորոգման ուղղությամբ: Փնտրում ենք հովանավորներ հաստատության մանկական լողավազանի վերանորոգման և գործարկման նպատակով, որն իր նպաստը կունենա երեխաների ֆիզիկական լիակատար դաստիարակության ապահովման գործում:

Տնօրենների 100% -ի կարծիքով հաստատության բյուջեն բավարար չէ երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման պայմանների համար : Քանի որ, հաստատության բյուջեն հիմնականում ձևավորվում է ծնողական վճարների և համայնքի բյուջեյի հաշվին, ապա այն հնարավորություն չի տալիս ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ, գույք, սնունդ, կատարել ընթացիկ նորոգումներ:

Հաստատությունների ֆինանսական միջոցներն ըստ գոյացման աղբյուրների ունեն հետևյալ տեսքը.

	Թիվ 1	Թիվ 2	Թիվ 3	Թիվ 5	Թիվ 7
Համայնքի բյուջե %	70	60.5	80	75	80
Ծնողական վճարներ %	28	32.5	20	25	20
Բարեգործական նվիրատվություններ %	-	5.5	-	-	-
Այլ աղբյուրներ %	2	1.5	-	-	-



**Գործիսի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Մարիետա Մարտիրոսյան**

*Մեր նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրը շենքի վերանորոգումն է : Ունենք գույքի և սարքավորումների խիստ կարիք: Բարեկարգման կարիք ունի նաև հաստատության տարածքը և խաղահրապարակները: Ակտիվ համագործակցում ենք սաների ծնողների հետ, նրանց մասնակցությամբ կազմակերպում ենք միջոցառումներ, էքսկուրսիաներ:*

Հաստատություններում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման համար, կիրառվում են նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ, ստեղծվում են կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը նպաստող մթնոլորտ և ֆիզիկական միջավայր: Յուրաքանչյուր երեխայի կարողություններին համապատասխան ցուցաբերվում է անհատական մոտեցում :


Տնօրենները նշեցին, որ բոլոր հաստատություններում ստեղծված են նպաստավոր պայմաններ մանկավարժների ինքնակրթության և ինքնազարգացման համար:

Տնօրեններից 4-ը գտնում են , որ հաստատության շենքային պայմաններն երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով լավ վիճակում են, իսկ 1-ը՝ բավարար:

Տնօրեններից 3-ը իրենց հաստատության սանիտարական վիճակը գնահատել են բավարար, իսկ 2-ը՝ լավ: Հարցումներից պարզ դարձավ, որ բոլոր հաստատություններն ապահովված են անհրաժեշտ ջերմաստիճանով :

Տնօրեններից 4-ը գտնում են , որ հաստատության շենքային պայմաններն երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով լավ վիճակում են, իսկ 1-ը՝ բավարար:

Տնօրեններից 3-ը իրենց հաստատության սանիտարական վիճակը գնահատել են բավարար, իսկ 2-ը՝ լավ: Հարցումներից պարզ դարձավ, որ բոլոր հաստատություններն ապահովված են անհրաժեշտ ջերմաստիճանով:




**Գործիսի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Գարինե Մինասյան**

*Մեր նախադպրոցական հաստատությունը հովանավորվում է Ֆրանսիայի Վիեն քաղաքի կողմից, որը հանդիսանում է Գործիսի քույր քաղաք: Վիենի կողմից օժանդակություն է ցուցաբերվում հաստատության երեխաների սննդի ապահովման գործում: Շենքն ունի վերանորոգման կարիք, հատկապես՝ տանիքը: Ունենք նաև երեխաների խաղերի, նրանց ֆիզիկական դաստիարակության կազմակերպման նպատակով անհրաժեշտ գույքի և սարքավորումների պակաս:*

**Հաստատության, մանկավարժական և ծնողական խորհուրդների գործունեության մասին տնօրենների հարցման արդյունքները հետևյալն են.**

- „Ինչպե՞ս եք գնահատում մանկավարժական խորհրդի գործունեությունը” հարցին՝ 3-ը պատասխանել են «Լավ», 2-ը՝ „Բավարար”: Նրանցից 2-ը իրենց պատասխանը հիմնավորել են նշելով մանկավարժական խորհրդի ակտիվ գործունեությունը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման գործում, համագործակցությունը տնօրենի և ծնողների հետ:
- „Ինչպե՞ս եք գնահատում ծնողական խորհրդի գործունեությունը” հարցին 4-ը պատասխանել են «Լավ», 1-ը՝ „Բավարար”: Նրանցից 2-ը իրենց պատասխանը հիմնավորել են նշելով ծնողական խորհրդի ակտիվ գործունեությունը, համագործակցությունը մանկավարժական խորհրդի հետ միջոցառումների կազմակերպման աջակցությունը և ակտիվ մասնակցությունը:



**Գործիս թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Գարինե Մինասյան**

Մեր նախադպրոցական հաստատության համար ամենահրատապը շենքի տարածքի բարեկարգման խնդիրն է և հարակից շրջապատի սանիտարական ոչ բարվոք վիճակը: Հարցը կայանում է նրանում, որ չգիտես ում կողմից հարմար են գտնվել քաղաքային աղբարկղները տեղադրել հաստատության մուտքի մոտ: Այդ խնդրով մենք բազմիցս դիմել ենք համապատասխան մարմինների, սակայն մեր բողոքները մնացել են անարձագանք: Զգալի են մեր մանկավարժների կատարած աշխատանքը մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակման գործում, սակայն նրանք վարձատրվում են շատ ցածր:

**Երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով հաստատության գործունեության լիարժեք կազմակերպման համար տնօրենների կարծիքով ամենացավոտ խնդիրներն են.**

- շենքերի հիմնանորոգումը,
- տիպային շենքի առկայությունը
- առողջ անոթի կազմակերպումը
- հաստիքացուցակների անհամապատասխանությունը դրույքաչափերին,
- գրադարանային ֆոնդի պակասը,
- շենքերի հավասարաչափ ջեռուցման խնդիրը,
- դիտակտիկ նյութերի, տեխնիկական միջոցների, բակային խաղերի , տաղավարների բացակայությունը
- սպորտդահլիճի, սպորտային գույքի բացակայությունը
- համակարգիչների բացակայությունը
- խաղահրապարակների վերանորոգումը

**3.2.Հարցումներ մեթոդիստների հետ**

Հարցումները հաստատության մեթոդիստների հետ կատարվել է հարցաթերթիկների միջոցով:

Հարցաթերթիկներ են լրացրել 5 հաստատության 5 մեթոդիստ: Հարցումներին մասնակցածների 60%-ի կարծիքով առկա գույքը, սարքավորումները, պիտույքները, խաղալիքները բավարար չեն կրթադաստիարակչական գործընթացը լիարժեք կազմակերպելու համար, իսկ 40%-ը հակառակ կարծիքն ունեն :

Հաստատություններում կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է բոլոր երեխաների ակտիվ մասնակցությամբ, յուրաքանչյուր երեխայի կարողություններին համապատասխան ցուցաբերվում է անհատական մոտեցում, ուսուցման գործընթացում կիրառվում են նոր մեթոդներ և դիտակտիկ նյութեր:

Հարցվածների 40%-ը ուսումնական հաստատությունում իրականացվող ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը գնահատել է «,Լավ», 60%-ը «,Բավարար»: Նրանցից 3-ը նախադպրոցական հաստատության կողմից սաների մտավոր զարգացմանն ուղղված ուսուցման գործընթացի իրականացման արդյունքները գնահատել է «,Լավ», իսկ 2-ը «,Բավարար»: Մեթոդիստներից 3-ը մանկավարժական կազմի գործունեությունը նախադպրոցական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրի բարելավման գործում գնահատել է «,Լավ», իսկ 2-ը «,Բավարար»:

Հարցմանը մասնակցած մեթոդիստների 80%-ի կարծիքով հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման գործում կիրառվում է ֆիզիկական միջավայրի աշխատանքային կենտրոնների բաժանման եղանակ, իսկ 20%-ի կարծիքով՝ ոչ: Նա իր պատասխանը հիմնավորել է նշելով սպորտային գոտու բացակայությունը:

Մեթոդիստները նշեցին, որ հաստատությունում չեն իրականացվում երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքներ հոգեբան և լոգոպեդ մանկավարժներ չունենալու պատճառով:

Հարցմանը մասնակցածներից 4-ը հաստատության կապը և համագործակցությունը սաների ծնողների միջև համարում է «,Լավ”, իսկ 1-ը «,Բավարար”:

***Հաստատության, մանկավարժական և ծնողական խորհուրդների գործունեության մասին մեթոդիստների հարցման արդյունքները հետևյալն են .***

Հարցված մեթոդիստներից բոլորը մանկավարժական խորհրդի գործունեությունը գնահատել են «,Լավ”, նրանք իրենց դրական պատասխանը հիմնավորել են նշելով ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը նպաստող մանկավարժական խորհրդի արդյունավետ գործունեությունը, նիստերի ժամանակին կազմակերպումը, համագործակցությունը դպրոցի տնօրենի, ծնողական խորհուրդների հետ, Մանկավարժական խորհուրդը կոլեկտիվում ապահովում է համերաշխ և առողջ մթնոլորտ, Հաճախակի կազմակերպում է միջոցառումներ:

Հարցվածների 40 %-ը ծնողական խորհրդի գործունեությունը գնահատել են «,Բավարար”, 60 %-ը՝ «,Լավ”: Նրանք իրենց պատասխանը հիմնավորել են նշելով ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը նպաստող ծնողական խորհրդի արդյունավետ գործունեությունը, համագործակցությունը տնօրենի, մանկավարժների հետ,:

***Երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով հաստատության գործունեության լիարժեք կազմակերպման համար մեթոդիստների կարծիքով ամենացավոտ խնդիրներն են.***

- սաների անհարգելի բացակայությունները աճը,
- մանկական և գեղարվեստական գրականության բացակայությունը,
- մանկավարժների ցածր աշխատավարձն իր բացասական հետևանքներով,
- սպորտային գույքի և նորագույն տեխնիկայի բացակայություն,
- խաղասենյին և հանգստի գոտիների բացակայությունը,
- անհատական տրամաբանական խաղերի բացակայությունը
- լոգոպեդի, հոգեբանի բացակայությունը
- վիտամիններով հարուստ սնունդը
- բեմականացման, ֆիլմի դիտման բացակայությունը
- քաղաքային մրցույթները, սպորտլանդիաները
- հաստատության տարածք թափառող շների մուտքը

### **3.2. Հարցումներ դաստիարակների հետ**

Հարցումները հաստատության դաստիարակների հետ կատարվել է հարցաթերթիկների միջոցով:

Հարցաթերթիկներ են լրացրել 5 հաստատության 25 դաստիարակ: Հարցումներից պարզվեց, որ կան խմբեր, որտեղ ընդգրկված սաների թիվը գերազանցում է ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N29-Ն հրամանով սահմանված ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ :

Պատճառը խմբասենյակների անբավարար քանակն է և ֆինանսական միջոցները:

Հարցումներին մասնակցածների 60%-ի կարծիքով առկա գույքը, սարքավորումները, պիտույքները, խաղալիքները բավարար չեն կրթադաստիարակչական գործընթացը լիարժեք կազմակերպելու համար, իսկ 40%-ի կարծիքով բավարար են :

Հաստատություններում կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է բոլոր երեխաների ակտիվ մասնակցությամբ, յուրաքանչյուր երեխայի կարողություններին համապատասխան ցուցաբերվում է անհատական մոտեցում, ուսուցման գործընթացում կիրառվում են նոր մեթոդներ և դիտողական, նկարագրող նյութեր:

Հարցմանը մասնակցած դաստիարակների 64%-ի կարծիքով նախադպրոցական հաստատությունում երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման, զարգացման համար ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ, իսկ 36% -ը –ի կարծիքով ամբողջական չեն, այլ մասնակի: Նրանք իրենց պատասխանները հիմնավորել են նշելով գույքի , տեխնիկայի անբավարար քանակը և սաների թվի գերազանցությունը:

Հարցվածների 92%-ի կարծիքով հաստատությունում ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ երեխայի անձի, նրա ստեղծագործական ունակությունների զարգացման համար, իսկ մյուսները կարծիքով՝ ոչ:

Հարցմանը մասնակցած դաստիարակներից բոլորը հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման գործում կիրառում է ֆիզիկական միջավայրի աշխատանքային կենտրոնների բաժանման եղանակը:

Հարցումներին մասնակցածների 64%-ը սաների օրվա ռեժիմի իրականացման արդյունավետությունը գնահատել է «Լավ», իսկ 36 %-ը «Բավարար»:

Դաստիարակների հետ կատարված հարցումներից պարզվեց, որ հաստատությունում չեն իրականացվում երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքներ հոգեբան և լոգոպեդ մանկավարժներ չունենալու պատճառով:

Հարցմանը մասնակցածներից 64%-ը հաստատության կապը և համագործակցությունը սաների ծնողների միջև համարում է «Լավ», իսկ 36 %-ը «Բավարար»: «Լավ» գնահատողներն իրենց պատասխանները հիմնավորել են նշելով յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը էքսկուրսիաներին, միջոցառումներին, ժողովներին, քննարկումներին, իսկ մյուսները գտնում են, որ ծնողները պետք է հաճախակի ներկա գտնվեն բաց պարապմունքներին, մասնակից լինեն միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպմանը:

Հարցումներից պարզվեց, որբոլոր հաստատություններում ստեղծված են նպաստավոր պայմաններ մանկավարժների ինքնակրթության և ինքնազարգացման համար:

Հարցված դաստիարակներից բոլորն անցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, սակայն այդ վերապատրաստումները դեռևս քիչ են և չեն բավարարում նրանց պահանջներին: Հարցված դաստիարակների 69% -ը մասնագիտական վերապատրաստման արդյունավետությունը գնահատել է «Լավ», իսկ 36 %-ը «Բավարար» :

Նրանք նշեցին, որ ցանկալի է վերապատրաստումներն անցկացնել Գորիս քաղաքում, կատարել փորձի փոխանակում լավագույն հաստատությունների դաստիարակների հետ ստանալո նոր գիտելիքներ, հմտություններ՝ սաների օրվա ռեժիմն ավելի հետաքրքիր և արդյունավետ կազմակերպելու համար:

Դաստիարակների 96% -ը հաստատության սանիտարական վիճակը գնահատել են «Լավ», իսկ 36 %-ը «Բավարար»: Բոլոր խմբասենյակներում ապահովված են սանիտարական անհրաժեշտ պայմաններ և ջերմաստիճան :

***Երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով հաստատության գործունեության լիարժեք կազմակերպման համար դաստիարակների կարծիքով ամենացավոտ խնդիրներն են.***

- համապատասխան սննդի կազմակերպումը
- մանկական և գեղարվեստական գրականության պակասը,
- մանկավարժների ցածր աշխատավարձն իր բացասական հետևանքներով,
- սպորտդահլիճի, սպորտային գույքի բացակայությունը
- անհատական տրամաբանական, ինտելեկտուալ խաղերի, գրենական պիտույքների, դիտակտիկ նյութերի, լեզուների, կոնստրուկտորների, կառուցողական նյութերի անբավարար քանակը
- խաղային և հանգստի գոտիների փոքր տարածքը
- խմբասենյակներում համակարգիչների բացակայությունը
- Խմբասենյակների ծանրաբեռնվածությունը,
- խմբասենյակների կահավորանքը
- մահճակալների անմխիթար վիճակը
- տրանսպորտային փոխադրամիջոցի բացակայություն
- այցերը թանգարաններ և այլ մշակույթի օջախներ

### **3.3. Հարցումներ ծնողների հետ**

5 Նախադպրոցական ուսումնական հաստատությունների 250 ծնողների շրջանում հարցումներն իրականացվել են հարցաթերթիկների միջոցով: Հարցումներից պարզ է դարձել, որ ուսումնական հաստատության կանոնադրությանը ծանոթ են հարցված ծնողների 92 %-ը, մնացածները՝ ծանոթ չեն դպրոցի կանոնադրությանը: Հարցված

ծնողների 87 %-ն է ամբողջությամբ ծանոթացել հաստատության հետ կնքված պայմանագրի բովանդակությանը, 12%-ը ծանոթացել է մասամբ, իսկ 1%-ն ընդհանրապես ծանոթ չէր:

Ծնողների 92%-ի կարծիքով հաստատությունն ապահովում է տեղեկատվություն ստանալու մատչելիությունը, իսկ 8 %-ը հակառակ կարծիքն ունեն:

Հարցվածների 97%-ը հաստատության տարածքի համապատասխանությունը երեխայի կրթադաստիարակչական գործընթացի և հանգստի կազմակերպման նպատակով գնահատել են «,Լավ», 3 %-ը՝ «,Բավարար»:

Հարցված ծնողների 85 %-ը բավարարված է երեխայի առօրյա վերաբերյալ իրեն տրամադրված տեղեկատվությունից, 8%-ը բավարարված է մասամբ, 2 %-ը բավարարված չէ:

Հարցված ծնողների 86 %-ը հաստատության կրթադաստիարակչական գործընթացի իրականացման առկա պայմանները գնահատել «,Լավ», 14 %-ը՝ «,Բավարար»:

Ծնողների 75% –ի կարծիքով առկա գույքը, սարքավորումները, պիտույքները, խաղալիքները բավարար են երեխայի կրթադաստիարակչական գործընթացը լիարժեք կազմակերպելու համար իսկ մյուսների կարծիքով՝ ոչ, 85 % –ի կարծիքով հաստատությունում ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ երեխայի անձի, նրա ստեղծագործական ունակությունների զարգացման համար, 15 %-ի կարծիքով՝ ոչ:

Հարցվածների մեծամասնության կարծիքով երեխայի գեղարվեստա-գեղագիտական, էկոլոգիական կուլտուրայի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար հաստատությունում ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ, մյուսների կարծիքով մասնակի են: Ծնողների 86 %-ը հաստատության կողմից երեխայի առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքները գնահատել է «,Լավ», 14 %-ը՝ «,Բավարար»: Հարցումների արդյունքները ցույց տվեցին, որ ծնողների 94 %-ի կարծիքով հաստատությունում ապահովված է կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը նպաստող մթնոլորտ և ֆիզիկական միջավայր, իսկ 6 %-ը հակառակ կարծիքի են: Հարցմանը մասնակցածներից 91%-ը հաստատության կապը և համագործակցությունը իրենց հետ համարում է «,Լավ», իսկ 9 %-ը «,Բավարար»: Նրանց կարծիքով կապի ամրապնդմանը նպաստում են հաճախակի այցերը, ակտիվ մասնակցությունը տարբեր միջոցառումներին, քննարկումները:

Հարցվածների մեծամասնության կարծիքով իրենց երեխաների կարողություններին համապատասխան ցուցաբերվում է անհատական մոտեցում և երեխաների նկատմամբ ապահովված են ծնողների և մանկավարժների միասնական պահանջները:

Մանկավարժների ուսումնադաստիարակչական գործունեության ազդեցությունը երեխայի զարգացման գործում հարցվածների 97%-ը գնահատել է «,Լավ», 3 %-ը՝ «,Բավարար»: Հարցվածների 74%-ը հաստատության տարածքի սանիտարահիգիենիկ պայմանները գնահատել են «,Լավ», 26-ը՝ «,Բավարար»: Իսկ խմբասենյակի սանիտարական անհրաժեշտ պայմանները մեծամասնության կարծիքով ապահովված են

***Երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների ապահովման նպատակով հաստատության գործունեության լիարժեք կազմակերպման համար ծնողները ամենացավոտ խնդիրները համարել են.***

- օտար լեզուների դասավանդման բացակայությունը,
- խմբերում երեխաների խտությունը,
- հոգեբանի, լոգոպեդի բացակայությունը
- երեխայի երևակայության զարգացմանը նպաստող բեմականացման, ֆիլմի դիտման բացակայությունը
- բարձր կալորիականությամբ սնունդը



- սպորտդահլիճի, սպորտային գույքի բացակայությունը
- համակարգիչների բացակայությունը
- քաղաքային մրցույթներ, սպորտլանդիաները
- վարակների կանխարգելման միջոցառումների ճիշտ կազմակերպումը
- ծնողների աշխատանքային ժամերի և նախակրթարանի ավարտի անհամապատասխանությունը
- պետական հաստատությունների պատշաճ միջամտություն
- երեխաների ուսումնառության գործընթացի կազմակերպումը խաղի միջոցով
- խաղահրապարակի վերաներոգումը
- սանիտարահիգենիկ պայմանների բարելավում
- հաստատության մոտ գտնվող աղբամանի տեղափոխումը
- պասիվ ծնողների ներգրավումը
- հաստատության տարածքի մաքրումը թափառող շներից

## Եզրակացություն

ՀՀ Գորիս քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրակա-նացված մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ բոլոր նախադպրոցական ուսում-նական հաստատություններում գրեթե ապահովված են ՀՀ կրթության և գիտության նախա-րարի՝ 2011 թվականի մարտի 30-ի N 257-Ն հրամանով հաստատված նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված նախադպրոցական տարիքի երեխաների համար զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների կատարումը: Խմբասենյակում ստեղծված է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյու-նավետության բարձրացման, ինչպես նաև երեխաների ստեղծագործական ներուժի բացա-հայտմանն ու դրսևորմանը նպաստող զարգացնող միջավայր (խաղային անկյուններ և աշխատանքային կենտրոններ և այլն), համապատասխան պետական չափորոշիչի պա-հանջներին: Անշուշտ, վերոհիշյալը դրական ազդեցություն է ունեցել նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների որակի վրա: Սակայն, նույն չի կարելի պնդել նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարածք-ների վերաբերյալ: Բակերում լիովին ապահովված չեն երեխայի զարգացնող առարկայական միջավայրի պահանջները: Բակերում և տարածքներում ստեղծված չեն բավարար պայման-ներ երեխաների ֆիզիկական և էկոլոգիական կուլտուրայի զարգացման համար: Հին ու մաշված են երեխաների ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներն ու օժանդակ հարմարությունները: Պարզ է, որ նոր սարքավորումների ձեռք բերումը, համալրումը և երեխայի զարգացնող համապատասխան միջավայրի համար բարենպաստ հարմարությունների ստեղծումը կախված է նախադպրոցական ուսումնական հաստա-տությունների ֆինանսավորման խնդրի հետ: Խնդիր, որի լուծումից է կախված այն բոլոր դժվարությունների հաղթահարումը, որի առջև է կանգնած համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

Մասնավորապես՝

- ✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը հազիվ է բավականացնում աշխակազմի աշխատավարձին և անհրաժեշտ ծախսերը հոգա-լուն: Ոչ բոլոր նախադպրոցական հաստատությունները հնարավորություն ունեն բարելավելու կամ որոշակիորեն թարմացնելու գույքն ու անհրաժեշտ սարքավորում-ները:
- ✓ Երեխաները լիարժեքորեն ապահովված չեն սննդով: Նախադպրոցական ուսումնա-կան հաստատություններում երեխաների սննդի ապահովման նպատակով հատկաց-ված գումարները հիմնականում ձևավորվում են ծնողական վճարներից (4000 դրամ ամսական), բարեգործական և առանձին անհատների կողմից կատարված հատկա-ցումներից:
- ✓ Դիտարկված նախադպրոցական հաստատություններում համարյա թե բացակայում են խաղերի, սպորտային միջոցառումների, հանգստի կազմակերպման ժամանակա-կից սարքավորումներ, նրանցից մեծ մասն ունեն ուսուցողական և փափուկ գույքի խիստ կարիք:
- ✓ Ֆինանսական միջոցների սղության պատճառով մեր կողմից դիտարկված նախա-դպրոցական հաստատություններում հաստիքացուցակում պաշտոնների անվանում-ները և հաստիքային միավորների քանակը չեն համապատասխանում ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաս-տատված օրինակելի հաստիքացուցակին: Այսպիսով խախտվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հունվարի 26-ի „ՀՀ պետական և համայն-քային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստի-

քացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին” N 29-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի պահանջը:

- ✓ Համայնքային բյուջեների սահմանափակ հնարավորությունների պայմաններում և ֆինանսավորման անբավարարության հետևանքով խախտված է նաև „Նախադպրոցական կրթության մասին” օրենքի 30-րդ հոդվածը, որը սահմանում է, որ մանկապարտեզի դաստիարակի աշխատավարձը ցածր չպետք է լինի ՀՀ-ում ընդունված նվազագույն աշխատավարձի կրկնակիից: Մինչդեռ մեր կողմից դիտարկված նախադպրոցական հաստատություններում դաստիարակի աշխատավարձը տատանվում 46000-50000 դրամի շրջակայքում:

Արդիական է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման փոփոխման խնդիրը: Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարումը իրականացնում է հիմնադիրը (տեղական ինքնակառավարման մարմինները) և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը: Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ, իսկ համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ (տես. „Հայաստանի Հանրապետության նախադպրոցական հաստատություն” համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, գլուխ V.): Ինչպես տեսնում եք, համայնքը և հատկապես՝ ծնողներն անմիջական մասնակցությամբ ներառված չեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացներին, մինչդեռ իրենց պարտադիր ու նշանակալից մասնակցությունն ունեն հաստատության բյուջեի ձևավորմանը (մեր կողմից դիտարկված նախադպրոցական ուսումնական հաստատություններում այն կազմում է 20%-ից 32%): Մեր կարծիքով համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործող կենտրոնացված կառավարման համակարգը չի կարող արդյունավետ լուծել նախադպրոցական կրթության բնագավառի առջև ծառայած արդի խնդիրները մարզային նախադպրոցական հաստատություններում և կարիք ունի մի շարք փոփոխությունների:

Խնդիր կա նաև նախադպրոցական կրթության կազմակերպման գործում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների, պարտականությունների ընդլայնման և հստակեցման հարցերում: Դրանք առաջին հերթին պետք է ուղղված լինեն համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններն անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովման խնդրին, ինչպես նաև հաստատությունների մանկավարժական կոլեկտիվները մասնագիտական և բարձր որակական հատկանիշներով օժտված կադրերով համալրմանը, հաստատությունների շրջակա և հարակից տարածքների մաքրության պահպանմանը:

## Առաջարկություններ

Նախադպրոցական կրթության համակարգը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանը, նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստմանը: Ելնելով այդ շեշտադրումից և հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ առաջարկում ենք.

Մշակել նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման ապակենտրոնացման ընթացակարգեր և ստեղծել այնպիսի պայմաններ, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունը կայանա որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ:

Այդ նպատակով՝

- ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան համայնքի ներկայացուցիչներին, ծնողներին և մանկավարժներին ակտիվորեն մասնակցել հաստատության կառավարման գործընթացներին,
- նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով պարտադիր ձևավորել ոչ պակաս 2 խորհրդակցական մարմին՝ մանկավարժական և ծնողական խորհուրդ: Նրանց ակտիվ գործունեության համար մշակել աշխատանքային ընթացակարգեր և ստեղծել նպաստավոր պայմաններ,
- խորհրդակցական մարմինների ակտիվ գործունեության ապահովման նպատակով մշակել աշխատանքային ընթացակարգեր, ներառելով հաստատության կողմից մատուցվող ծառայությունների պարբերական մշտադիտարկումների աշխատանքներ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության սաների ծնողներին ակտիվորեն ներգրավել հաստատության կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոնների իրագործման, ինչպես նաև բարեկարգման գործընթացների մեջ:

Օրենքով հստակեցնել համայնքի ղեկավարի գործունեությունը նախադպրոցական կարթության կազմակերպման գործում, ընդլայնելով նրա լիազորությունների ու պարտականությունների ցանկը և ներառելով դրանց մեջ այնպիսի դրույթներ, որոնք ուղղված կլինեն.

- համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կայուն ֆինանսական աղբյուրներով ապահովման խնդրին, այն չափով, որ հաստատության երեխաներն ըստ գործող նորմատիվների լիարժեքորեն ապահովված լինեն սննդով,
- համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների հաստիքացուցակներում պաշտոնների անվանումների և հաստիքային միավորների քանակի համապատասխանությանը ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաստատված օրինակելի հաստիքացուցակին,
- համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների դաստիարակի աշխատավարձի չափի համապատասխանությանը „Նախադպրոցական կրթության մասին” օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված չափին:

Համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների շրջակա տարածքների սանիտարահիգիենիկ պայմանների և երեխաների կյանքի անվտանգության ապահովման նպատակով առաջարկվում է.

- հաստատությունների շրջակա և հարակից տարածքներում իրականացնել բարեկարգման և մաքրության պահպանմանը ուղղված աշխատանքներ,

- քաղաքյին աղբարկղերը տեղափոխել նախադպրոցական հաստատությունների տարածքները շրջափակող ցանկապատերի հարևանությունից և դրանք տեղադրել ցանկապատերից ամենաքիչը 50 մետր հեռավորության վրա,
- հաստատությունների հարակից տարածքներով անցնող մայրուղիների և փողոցների վրա տեղադրել երթևեկության նախազգուշացնող և հատուկ թելադրանքի նշաններ: